ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԱՆՈՐԻ ՄԱՂԹԱՆՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

(Քաղուած Դեկտեմբերի 31-ի հեռուստատեսային ելոյթից)

Սիրելի հաւատացեալներ եւ հայրենակիցներ,

Փառք եւ գոհութիւն եմ ընծայում առ Բարձրեալն Աստուած, որ ահա ինձ շնորհեց, որ իմ կեանքումս երկրորդ անգամ լինելով ես Նոր Տարին ողջունեմ իմ հայրենի հողի վրայ, իմ հարազատ ժողովրդի հետ միասին:

Բնականօրէն ժամանակը նոյն ժամանակն է ամէն տեղ: «Նոր» տարին ոչ նոր է, եւ ոչ էլ «հին» տարին հին է: Ժամանակի մէջ ոչ նորը կայ եւ ոչ էլ հինը: Ամէն տեղ մարդիկ ողջունում են այսպէս կոչուած Նոր Տարին՝ իւրաքանչիւրը ինքն իր մէջ նայելով, թէ ինչպէս է ցգում ինքն իրեն յաւերժագնաց ժամանակի այս ընթացքին մէջ:

Այսօր, ահաւասիկ, երկրորդ անգամ լինելով, ես ժամանակի այս հանգրուանը ողջունում եմ իմ ժողովրդի հետ միասին, այդ ժողովրդի կեանքի տրոփը ցգալով իմ սրտի մէջ, մի խօսքով այն հայրենի հողի վրայ, որ արդիւնքն է իբրեւ հայրենիք իմ հայրերի կենսաշէն քրտինքին, իմ ազգի նահատակների սուրբ արիւնի, մի խօսքով՝ աստուածատուր շնորհքներին, որոնցով հայ ժողովուրդը մեր հայրենի հողի վրայ մարդկային կեանքը, Աստուծոյ տուած կեանքը արժեցրել է եւ արժեցնում է:

Հարազատներ, ահա վերջ գտաւ 1996 թուականով բնորոշուած տարին: Այսօր անդրադառնում ենք, որ 1996 տարիներ են անցել այն օրից, երբ Քրիստոս ծնուեց աշխարհում, երբ երկինքը միացաւ երկրին եւ նոր շրջան սկսուեց մարդկային պատմութեան մէջ:

1996 տարուան ընթացքում, թէ ինչ կատարուեց Մայր Աթոռ Ս.

Էջմիածնում, որպէս քրիստոնէական ապգ մեր բոլորի այս ծննդավայրում, ես չէ որ պիտի խօսեմ այդ մասին: Պատմութիւնն է այդ բոլորի հանդիսարանը, դատարանը եւ միանգամայն դատաւորը: Այսօր ես կգում եմ, որ 1996-ը եղաւ յառաջադիմութեան, նոր իրագործումների շրջան դարաւոր մեր Սուրբ Աթոռի պատմութեան մէջ: Փառք Քեզ, Աստուած, որ երիտասարդ հոգիների մէջ Քո Սուրբ Հոգին ծնեցրիր: Եւ ահաւասիկ նոր աբեղաներ, քահանաներ, սարկաւագներ ընծայուեցին Աստուծոյ եւ մեր ապգին ձեռնադրութեան սրբարար շնորհքի միջից: Աշխուժացաւ մեր Հոգեւոր Ճեմարանը՝ ուրիշ հոգեւոր դպրանոցների հետ միասին: Ահաւասիկ կապմակերպուեց Քրիստոնէական Դաստիարակութեան եւ Քարոզչութեան Կենտրոնը եւ ուսուցիչների պատրաստումը, կրօնքի դասաւանդման ուժեղացումը եւ քարոզչութեան կապմակերպումը ու ժողովրդի մէջ տարածումը: Ահաւասիկ ունեցանք չորս նոր թեմեր Հայաստան աշխարհում, որպէսզի Եկեղեցին առաւել եւս մօտենայ ժողովրդին, լինի ժողովրդի կեանքում: Ունեցանք Սեպտեմբերի 8-ին Միւոռնօրհնէքը: Հանդիսավայրն էր Ս. Էջմիածինը բոլոր նրանց համար, ովքեր Միւոռնի օծումը ունէին, կամ ցանկանում էին ունենալ, իրենց ճակտի վրայ, Քրիստոսի եւ հայութեան դրոշմը: Աշխարհի չորս կողմերից եկած Հայ ժողովրդի կաւակների ժամադրավայրն էր Ս. Էջմիածինը:

Մենք առիթ ունեցանք գնալու Հայաստանի այլական շրջաններ, տեսնելու մեր ժողովրդին, լինելու մեր հոգեւոր եղբայրների հետ եւ նաեւ առիթներ ունեցանք գնալու մինչեւ արտասահման՝ Միացեալ Նահանգներ եւ Կանադա, Հարաւային Ամերիկա՝ Արգենտինա, Ուրուգուայ, Բրազիլ, եղանք Պոլսում, եղանք Շուեյցարիայում, Նորվեգիայում: Այս բոլոր հանդիպումների ընթացքին առաւել մօտից ճանաչեցինք ժողովրդի մէջ առկայ ներկայութիւն եղող հաւատքը, որ սակայն պէտք ունի խթանումի, գիտակցական անդրադարձումի, անձնական ապրումի եւ պատասխանատուութեամբ գործադրութեան:

Ունեցանք նաեւ այնպիսի դէպքեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, երբ ընդունեցանք այստեղ Ռուս Օրթոդոքս Եկեղեցու, Ռումինիոյ Օրթոդոքս Եկեղեցու պետերը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ընդհանուր Քարտուղարը եւ այլ հոգեւորականներ, որոնք բարձր պատասխանատուութիւններ ունեն աշխարհում: Մենք էլ առիթներ ունեցանք տեսնելու ուրիշ հոգեւոր պետերի, հանդիպելու Յոյն Օրթոդոքս Եկեղեցու ընդհանուր հոգեւոր պետին՝ Տիեզերական Պատրիարքին, Կ.Պոլսում, նաեւ վերջերս, ինչպէս բոլորդ իմացաք, Հռոմեական Կաթողիկէ աշխարհատարած մեծ Եկեղեցու պետին՝ Յովհաննէս-Պօղոս Բ Պապին, ի Վատիկան: Այս բոլորը մի աշխուժութիւն, մի շարժում ստեղծեցին մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, որի համար ես փառք եմ տալիս Աստծուն:

***

Այս առիթով նախ ուզում եմ ողջունել իմ բոլոր հոգեւոր եղբայրներին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Նուիրապետական Աթոռների պետերին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահակալին, Երուսաղէմի եւ Կ.Պոլսոյ Պատրիարքներին, Հայաստանի եւ արտասահմանի մեր բոլոր թեմերի առաջնորդներին, բոլորին ասելու համար. «Եկէ՛ք, եղբայրներ, ձեռք-ձեռքի տանք, միասնական կերպով աշխուժացնենք, պտղաբեր դարձնենք դարերից եկող, բայց դարերի մէջ չպարփակուած մեր Հայոց Առաքելական Եկեղեցին, որի 1700-ամեակն ենք սկսել նշել այս թուականից եւ նշելու ենք մինչեւ 2001 թուականը, որը մեկ համար լինելու է շրջադարձային տարի, 2001-ը՝ երրորդ հազարամեակի առաջին տարին»:

Ես պարտք եմ զգում նաեւ ողջունելու մեր Հայաստանի Հանրապետութեան եւ նրա առաջին սպասաւորին՝ մեր սիրելի եւ վսեմաշուք Նախագահին՝ ցանկանալով, աղօթելով, որ գալիք հինգ տարիները նրա համար լինեն նորանոր իրագործումների, ժողովրդանուէր գործունէութեան եւ հայրենաշէն աշխատանքի տարիներ՝ արձանագրելով պատմութեան մէջ այնպիսի նուաճումներ, որոնք մեր ժողովրդին յառաջադիմութեան մէջ կը լինեն կարեւոր ներդրումներ:

Ողջունում եմ մեր պետութեանը երեք գլխաւոր իշխանութիւններին՝ Օրէնսդրական իշխանութիւնը մեր Ազգային Ժողովով արտայայտուած, նրա նախագահին եւ բոլոր անդամներին՝ մաղթելով, որ նրանք մեր երկրի, հայ ժողովրդի, մեր պետութեան գերագոյն շահերը ունենան որպէս ուղեցոյց փարոս իրենց մտածումների եւ գործերի մէջ:

Ողջունում եմ մեր Գործադիր իշխանութեանը, Հայաստանի կառավարութեանը եւ նրա նոր Վարչապետին եւ բոլոր նախարարներին, ի խորոց սրտի աղօթելով, որ նրանք լծուեն գործնական, ժողովրդի կեանքի բարելաւման այն բարեշէն գործին, որին կարօտը ունի մեր ժողովուրդը, մանաւանդ այս ժամանակներում:

Ես ողջունում եմ նաեւ մեր պետութեանը դատական իշխանութեան, մեր Սահմանադրական Դատարանի նախագահին եւ բոլոր անդամներին՝ մաղթելով, որ աչալուրջ հսկեն, որ օրէնքը եւ արդարութիւնը վեր մնան բոլոր տեսակի մասնաւոր շահերից ու նկատումներից:

Այս բոլորի հետ միասին ես ողջունում եմ մեր քաջարի բանակին, բոլոր սպաներին, բոլոր այն իմ սրտահատոր կինուոր եղբայրներին, որոնք մեր հայրենիքն են պաշտպանում:

Ողջունում եմ մեր Ղարաբաղի ժողովրդին եւ նրա հերոսական անձերին, որոնք շարունակում են իրենց Աստուծմէ տրուած կեանքը պաշտպանել ու ծաղկեցնել:

Ողջունում եմ մեր բոլոր ժողովրդի կաւակներին՝ քաղաքների մէջ, թէ գիւղերի մէջ, հայրենիքում, Արցախում, թէ ողջ Սփիւռքի մէջ:

Զգում ենք, եղբայրներ, որ մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակ, որ մեր պատմութեան մէջ պիտի լինի յեղաշրջումի շրջան, այսինքն կերպարանափոխութեան շրջան: Գերի էինք, ապատ դարձանք, ինչպէ՞ս ենք արժեցնելու այդ ապատութիւնը: Ապատութիւնը միայն շնորհք մը չէ Աստծուց տրուած, այլ պարտականութիւն է: Նա ով իր ապատութիւնը պատասխանատուութեան զգացումով չի ապրի, նա ապատութեան արժանի անձ ու ազգ չէ:

Անցածը անցած է: 1996-ը այլեւս պատմութեան կը պատկանի: Վաղուանից սկսեալ մենք արձանագրելու ենք եւ արտասանելու ենք մեր շրթների վրայ 1997 թուականը: Ինչպէ՞ս ենք նայելու մեր գալիք կեանքին: Ես մի խօսք ունեմ միայն ձեզ բոլորիդ փոխանցելու Մայր Աթոռի այս արբանեակաւորք վայրից. Նեղութիւնները կան եւ պիտի լինեն: Առանց նեղութեան կեանք չկայ: Առաւել կամ նուազ չափով նեղութիւնը մաս կը կազմի մարդկային մեր գոյութեանը, մեր կեանքի շաղուածքին: Բայց մարդը եղել է միշտ ապրելու եւ յաղթելու համար: Եւ այդ կ'իրագործուի երեք հիմնական սկզբունքների հրամայականին ներքոյ. Հաւատ, Յոյս եւ Սէր: Նա որ Յոյս չունի, նրա կեանքն արդէն մեռելութիւն է, նոյնիսկ իր ապրելու ընթացքին: Իսկ այդ յոյսը եթէ չսնուցուի Հաւատքով, այդ յոյսը երկար կեանք չի ունենայ: Իսկ այս բոլորը պայմանաւորուած են Սիրոյ գաղափարով, Սիրոյ զգացումով եւ Սիրոյ զգացումի ներքոյ կատարուած այն գործերով, որոնք ստեղծագործութիւն են: Մենք նոր ազգ չենք, երեկ չծնուեցինք: Դարերին նայեցէք, ոչ թէ անցնող դարերին միայն, այլ գալիք ժամանակներին: Յոյս, Սէր եւ Հաւատ: Երեք մեծագոյն ուժերը մարդկային կեանքի, որոնք կոչւում են աստուածիսային առաքինութիւններ: Հետեւաբար, նեղութիւնները թող մեզ չառաջնորդեն յուսալքութեան եւ դժգոհանքի, գանգատի հոգեբանութեան, որ կը կաշկանդի մեզ: Յուսալքութիւնը ինձ համար մահ է: Հեռու՛ այդ փորձութիւնից: Լաւատես հոգով, յոյսի հեռանկարով, հաւատքի զսպանակով եւ սիրոյ արտաբերումով, արտահոսքով նայենք դէպի կեանք:

Սիա մեր բոլորի հրամայականը 1997 թուականին համար: Զմոռանանք, որ այս տարին, ինչպէս բոլոր տարիները, նշուելու են Յիսուս Քրիստոսի ծննդեան խորհուրդովը, «զի Աստուած ընդ մեզ է»: Էմմանուէլ է Յիսուսի անունը: Էմմանուէլ կը նշանակի «Աստուած մեզ հետ»: Եկէք մենք լինենք Աստծոյ հետ մեր հայրենիքի ճանապարհով, մեր ժողովրդի կարգացման տեսիլքով՝ վասն փառացն Աստուծոյ, վասն ծառայութեան մարդկան, վասն պայծառութեան ազգիս հայոց՝ յաւիտեանս յաւիտենից:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ մեզ, ընդ ամենեսեան, ամէն: